





ԵԹԵ ԹԵԼ ԱՆԻԻ ԱՄՐՈՂՁՈՒԹԵԱՄՔ ՊԱՐԴԵ ԿԱԶՆԵ ԵՒ ԱՅՍՐՅՈՐԴԱՆԱՆԸ

### ՀԱՄԱՍ ՊԱՏՐԱՍ Ե ՀԱՄԱԶԱՅՆԵԼՈՒ ԻՍՐԱՅԷԼԻ ՀԵՏ

ԿԱԶՆԱ, 23 (ՌՈՑԹԸՐԶ) - Համասի հիմնադիր ղեկավար շէյխ Ահմադ Եասին կիրակի օր ըստե, որ պատերազմի համաձայնագրի վերջնական խորհրդակցությունները համարվում են անհնարաբար և անարդարացի:

Շէյխ Եասին, որ երեք տարի առաջ այսպիսի առաջարկ մը ներկայացրեց, կը խոստային այն պահանջները, որոնք համաձայնագրի շրջանակներում չեն լինելու:

Եասին կոչ ուղղեց նաև ՔՀՄԻ ՏՀՎԻԽԻ մէջ բանակցող պաղեստինցի պատերազմիչներուն՝ տուն դառնալու եւ շարունակելու պայմարը: Համասի հոգեւոր ղեկավար շէյխ Եասին, որ համաձայնագրի շրջանակներում այն պահանջները, որոնք համաձայնագրի շրջանակներում չեն լինելու, որ համաս ճանաչում պիտի չտայ Իսրայելին: Համաս հաստատ կը մնայ Իսրայելի ճանաչում չտալու իր կեցողութեան վրայ, հակառակ անոր որ ՊԱԿ եւ պաղեստինեան իշխանութիւնը վերատեսուելիք են իրենց կեցողութեան վրայ:

### ՄՈՒՊԱՐԱՔ ԵՒ ԱՊՏԱԼԼԱ ՔՆՆԱՐԿԵՅԻՆ ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ

ՌԻԱՏ, 23 (ՌՈՑԹԸՐԶ) - Եգիպտոսի նախագահ Հիւսնի Մուսարաֆ կիրակի օր ՄԱՌԵՆԻՆ Արաբիա այցելելու տեսակցութիւն ունենալու համար պահանջները իշխան Ապտալային հետ:

ՄԱՌԵՆԻՆ պաշտօնական լրատու գործակալութիւնը հաղորդեց, որ Մուսարաֆ եւ Ապտալայ տեսակցութիւն ունեցան թաշկենտէ մէջ: Գործակալութիւնը ակնարկեց, որ Մուսարաֆ եւ Ապտալայ ղեկավար ընթացքին քննարկեցին Միջին Արեւելքի խաղաղութեան գործընթացը, արաբական գրաւեց Հոդերուն իրավիճակը, ինչպէս նաև արաբական եւ իսլամական աշխարհը յուզող հարցերը:

Միացեալ Նահանգներու նախագահ Պիլ Քլինթոն կոչ ուղղեց Հիւսնի Մուսարաֆի եւ Յորդանանի Ապտալայ Բ. Թագաւորին գորազին կանգնելու խաղաղարար ճիգերուն:

ՉԵԶՆԻՈՅ ԿՈՒՅՆԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՆ

### ՌՈՒՍԱԿԱՆ ՕԴՄՆԱԿԵՐ ԿԸ ՌՄԲԿՈՇԵՆ ԸՄԲՈՍՏՆԵՐՈՒ ԿԵԴՐՈՆՆԵՐ

ՄՈՍԿՈՒԱ, 23 (ՌՈՑԹԸՐԶ) - Ռուսական ռազմական օդանաւեր կիրակի օր Չեչենիոյ հարաւային յիւնիւններուն վրայ բանալի երկու կիրճերու մէջ ըմբոստ կեդրոններ ռմբակոծած են, մինչ անջատողական շրջանի տարածքին չեչեն գիւնեային իրենց յարձակումներուն թափ տուած են, ըստ ռուսական «Ինթըրֆաքս» լրատու գործակալութեան:

Գեչենիոյ ղաղապետը Գոստիները կ'ուղղուին, ապա քանդուած մայրաքաղաք Կրոզնի եւ այլ քաղաքներու մէջ յարձակումներու կը ձեռնարկեն:

Շարաթ օր, Ռուսիոյ ներքին ապահովութեան սպասարկուելիքները յայտնած էին, թէ գտած են փաստաթուղթեր, որոնք ցոյց կու տան, թէ ըմբոստները կրճարագրեն Կրոզնի, Չեչենիոյ երկրորդ մեծագոյն քաղաքը՝ Կուստերմէ-սրեւ Նոժայ-Եուրթրոյրաւել:

Շրջանին մէջ ներքին գործոց նախարարութեան պաշտօնատարները յայտնած են, թէ Չեչենիոյ եւ ընդհանուր հարմար յարմարեան հրամարտական հրամարտը ապաստան կը մնայ:

### ԱԶՐՊԵՅԱՆ

### ԷՅ. ԷՆ. ԷՍ. ՊԱՏԿԵՐԱՍՓՈՒԵՅ ԶԵԶԷՆ «ՊԱՏԵՐԱԶՄԻ ԻՇԽԱՆ» ՊԱՍԱԵԻ ՀԵՏ ՀԱՐՑԱԶՐՈՅՐ

ՄՈՍԿՈՒԱ ՔՆՆՈՒԹԻՒՆ ԿԸ ՊԱՇԱՆՁԷ

Ազրպէյճանական էյ. Էն. Էս. պատկերասփիւռ լրատու շարաթագրերը:

սփռած է չեչեն հրամանատար Շամիլ Պասաեւի հետ խնդրալարոյց հարցազրոյց:

Գործակալութեան նախագահ Վահիտ Մուսթաֆաեւ անձամբ ներկայացուցած է յայտագիրը:

Նշեմք, որ Ազրպէյճանի իշխանութիւնները արդիւնաւոր էին այս հարցազրոյցին պատկերասփիւռը: Մուսթաֆաեւի համաձայն, միայն Ազրպէյճանի նախագահի անձնակազմի ընկերային-քաղաքական վարչութեան պետ Ալի Հասանով հաստատած է, որ Ռուսիա ճշդ լինելու պահանջած է Ազրպէյճանի իշխանութեան վրայ, որպէսզի հարցազրոյցը չպատկերասփուռուի:

Էյ. Էն. Էս. համաձայն, Ռուսիոյ անվտանգութեան խորհուրդի քարտուղար Սերկէյ Իվանով զիմած է Ազրպէյճանի իշխանութիւններուն, որպէսզի Պաքու քննութիւն լրանայ այս հարցազրոյցին ուղղութեամբ: Ըստ Մոսկուայի ղեկավարական աղբյուրներէ:

(ՌՈՑԹԸՐԶ) Երբ. Է. 10

### ՔՈՒԵՅԹՅՈՒՆ ԳԵՐԻՆԵՐՈՒ ՀԱՐՑՈՎ

### ԻՐԱՔ ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ ԿԸ ՆԿԱՏԷ ՌՄԱՇԻՆԿՈՒՆԻ ԱՄՔԱՍՏԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Իրաքի խորհրդարանը անընդունելի կողմնակցութիւն ցուցաբերեց Իրաքի նախագահ Սադամ Խուսեյնի կողմնակցութեան վրայ: Պաշտօնատ 1991ի պատերազմին ի վերջոյ կ'ընկնէր իր կողմը:

Ամիր Մոհամէտ Ռաշիտ ըստե նաեւ, որ Ռիատի որոշումը կը սպառնայ ՕՓԷՔԻ մնացեալ անդամներուն: Ռաշիտ կ'ակնարկէր ՍԱՌԵՆԻԱՆ Արաբիոյ այն որոշումին, որուն հիման վրայ Մոցի երկիրը 500 հազար տակառով պիտի բարձրացնէ օրական արտադրութիւնը: Ռաշիտ ակնարկեց, որ Ռիատի այս որոշումը արդիւնքն էր ամերիկեան ճնշումին ՄԱՌԵՆԻՆ Արաբիոյ եւ ՕՓԷՔԻ մնացեալ երկիրներուն վրայ:

Խորհրդարանի նախագահ Սադամուն Համատի նամակ մը ուղղեց ամերիկացիներին, յայտնելու համար, որ Իրաք զինքը կ'ընկնէր իր կողմը, որ 1991ի պատերազմի աւարտին, Իրաք ազատ արձակած է իր զինուորները, եւ թէ այդ գործողութեան հրահանգը կ'արժէր Խաշի միջազգային կազմակերպութիւնը: Համատի հերքեց նաեւ այն լուրերը, ըստ որոնց, Իրաք արգելակած է աշխատանքը Միջազգային Կարմիր Խաչին՝ բանտարկուած պահելով քուէյթցիները:

Քուէյթ կ'ըսէ, որ Իրաքեան ներստեղծումի օրերուն անհետացած քուէյթցիները 505 հոգի տակաւին կորսուած կը նկատուին: Սակայն Պաշտօնատ կը հերքէ եւ կ'ըսէ, որ նոյն հանգրուանին կորսուած են նաեւ 1150 իրաքցիներ, որոնց ճակատագիրը ցարդ յայտնի չէ:

Միւս կողմէ, Իրաքի քարտուղար Ֆարիդ արտադրութիւնը բարձրացնելու ՍԱՌԵՆԻԱՆ Արաբիոյ որոշումը, ղիտեյ տալով, որ անկա կը խախտէ ՕՓԷՔԻ օրէնքները:

### ՀԱՅԱՍՏԱՆ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆ ՊԻՏԻ ԲԱՆԱՅ ԻՐԱՔԻ ՄԵՉ

Իրաքի պետական լրատու գործակալութեան (ԻՆԱ) հաղորդումին համաձայն, Հայաստանի հիւպատոս Եուրի Բարախանեւ եւ ղեկավարանտան գործակար Մուրատ Մխիթարեան անցեալ շաբաթավերջին Պաշտօնատ ժամանած են Իրաքի մէջ հայկական դեսպանատան հիմնադրութեան աշխատանքները հետապնդելու համար: Մ. Մխիթարեան նշած է, որ Հայաստան իր լաւագոյնը պիտի ընէ, որպէսզի ՄԱԿ ջնջէ Իրաքի դէմ հաստատուած պատժամիջոցները: Հայաստան հաստատակամ է, որ երկու երկիրներուն միջեւ գործակալութեան նոր մարզեր բացուին, ըսած է ան:

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՌԻՂԱՊԹԻՈՆԵՐ ԳՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

### ԹՈՒՐԹԻԱ ԱՌԱՋԱՆՅԵՐԹՈՒԹԻՒՆԸ ԿՈՒ ՏԱՅ ԱՄԵՐԻԿԵԱՆ «ՊԷԼ ԹԵՔՍԹՐՈՆ» ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Թուրքիա շաբաթավերջին ամերիկեան «Պէլ Թեքսթրոն» ընկերութիւնը իր ցանկին առաջին դիրքին վրայ վերադարձ է՝ յարձակողական 145 ուղղաթիռներու հայթայթումին համար եւ յայտնած, թէ Եւրոպական Միութեան կողմէ կատուցուող ռազմական քեռնատար 26 մեծ օդանաւեր պիտի գնէ:

Թուրքիոյ վարչապետ Պիլիէթ Եւելիտ երկու ընկերութիւններու ցանկ մը յայտարարած է: Երկրորդ դիրքի վրայ կը գտնուի ռուսական «Քամով - Ա» եւ «Իսրայէլ Էրթրաֆթ Ինտաթրիպ» իւրաքի, որ «Պէլ»-ի կողքին, ուղղաթիռներու գծով բանակցութեանց պիտի ձեռնարկէ Անգալի հետ:

Հայաստանի վարչապետը կը գնահատուի կ'առաջարկուի առաջին ուղղաթիռը արտադրել 2003 թուականի երկրորդ կիսուն:

Եւելիտ թղթակիցներու ըսած է, թէ ցանկին դասաւորումը վերջնական չէ:

Վերջնական որոշում մը կը նախատեսուէր անցեալ Ուրբաթ օր: Անկախ անցեալին արդէն երկու առիթներով յետաձգուած է:

Եւելիտ յայտնած է, որ եթէ նշեալ երկու խմբակներու հետ բանակցութիւնները յաջողութեամբ չարձանագրեն, երրորդ ընկերութիւն մը՝ իտալական «Ալկոսթա» ընկերութեան հետ, կ'ընկնէ բանակցութիւններու ձեռնարկը:

Անգալա կ'ըսէ, թէ ուժեղ ուղղաթիռները, որոնք օժտուած են հակահրամաձայնի հրթիռներով եւ արագօրէն կրակող ծանր գնդացիներով, անհրաժեշտ են դիմագրաւելու համար հաւանական թշնամի դիմադրութեան արդարեւ անկախ շրջաններէն մէկուն մէջ:

Թրքական բանակը արդէն «Սուփր Քուրա» 9 ուղղաթիռներ ունի եւ վորակարներ կ'ընեն, թէ գոհ են անոնցմէ, հակառակ անոր որ անոնցմէ մէկը 1997ին, Հիւսիսային Իրաքի վերել վարտուած էր քիւրտ ըմբոստներու կողմէ:

Չինեալ ուժերը փորձած են յաւելեալ 10 «Սուփր Քուրա»ներ գնել, սակայն անոնք 1995ին հրաժարած են ծրագրէն, ամերիկեան Քոնկրէսին կողմէ վաճառքը խափանելու սպառնալիքէն ետք՝ մարդկային իրաւունքներու ոտնակոխումի մտահոգութիւններով:

Այս պարագային նաեւ նոյն մտահոգութիւնները կրնան «Պէլ»-ի հետ համաձայնութիւն մը խափանել: Արդարեւ, ամերիկեան կառավարութիւնը չի կրնար երաշխաւորել, թէ Թուրքիա վարկաբեկիչ նոր սպառնալիք մը պիտի չդիմագրաւէ, նկատի ունենալով, որ անկախ իրաքը Քոնկրէսին չի կրնար ներկայացնել մինչեւ պայմանագրութեան կնքումը:

(ՌՈՑԹԸՐԶ)

ՎԱՆԱՅ ԶԱՅՆ ՎԱՆԱՅ ԶԱՅՆ

Այսօր՝ Երկուշաբթի, 24 Յուլիս 2000ին, ժամը 12:30ի լուրերէն ետք

### ՀԱՐՅԱԶՐՈՅՅ

Քալիֆորնիոյ պետական համալսարանի հայկական եւ միջին արեւելեան պատմութեան բաժանումի վարիչ, պատմաբան ՓՐՈՖ. ՌԻՉԱՐԴ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆԻ հետ Կը ներկայացնէ Սոնիա Քիլիքեան

Ժամը 16:00ին

### ՀԱՐՅԱԶՐՈՅՅ

Հայաստանէն Հայ Օգնութեան Միութեան Կեդրոնական Վարչութեան անդամ, գրող եւ հրատարակիչ ԸՆԿԷ. ԱԼԿԱՐԻ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ հետ

ՎԱՆԱՅ ԶԱՅՆ ՎԱՆԱՅ ԶԱՅՆ

### ԵՐԿՈՒՇԱՐԹԻ ՕՐՈՒԱՆ ՅԱՅՏԱԳԻՐԸ

6:30 - Բացում

**F** 6:35 - Բարի լույս

**M** 7:00 - Հայկական եւ օտար մեղմ երգեր

8:00 - Օրուան յայտագիրի ընթերցում

8:15 - Տեղական մամուլի խորագիրներու ընթերցում

**9** 8:30 - Հայերէն լուրեր

8:40 - Օդերեւոյթ

**7** 8:45 - Ինչ կ'ըսեն աստղերը

9:00 - Հայկական խառն երգեր

9:30 - Թոնիչք

**M** 10:00 - Սակարան

**H** 10:30 - Արաբերէն լուրեր

**Z** 10:45 - Արաբերէն երգեր

11:30 - Հեղինակային

**և** 12:00 - Շահանդուխտի հետ

12:15 - Երաժշտութիւն

**2** 12:30 - Հայերէն լուրեր

13:00 - Սակարան

**1** 13:05 - Ազգային լեզուաբանական երգեր

**2** 14:30 - Արաբերէն լուրեր

**7** 15:00 - Արաբերէն յայտագիր

**2** 16:00 - Հարցազրոյց

**1** 16:30 - Արաբերէն լուրեր

16:40 - Հանդիպում

18:00 - Տաղարան

**2** 18:30 - Հայերէն լուրեր

**2** 18:40 - Հայերէն լուրեր

**1** 20:30 - Եւրոպային

**1** 22:30 - Պատուէր

**9** 00:30 - Փակում

**National**  
Air Conditioners

**Clean & Quiet**  
Add quality to your life!

Satisfying the World's Safety Standards

ISO 9002

U.S.A. International Japan

AENOR ONEMKO

Spain Norway Germany Europe

**TUTUNJIAN CORP. S.A.**  
Exclusive Agents  
Tel.: (04)-712129/130



# ԼԵԶՈՒԻ, ՊԵՏՈՒԹԻՆ, ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

### 1.

Պետություն ծագման վերաբերեալ տեսական հայեցակարգերը (Ոսհակատական, հողաիրական, բռնութեան, հասարակական դաշինքի եւ այլն), գանձազան ելակէտերով, սակայն միահաւմուռ կարեւորելով մարդկանց միաւորման, համախմբման դերը պետական անբողոքի գոյացման, ինչպէս նաեւ պետական կառավարման բնականոն գործառութեան եւ ներդաշնակ գարգացման մէջ, միեւնոյն ժամանակ, բոլորն անխտր, շնորջանցուն են թէ պետութեան ծագման եւ թէ պետական կառավարման հնարաւորութեան գլխաւոր պայմաններից մէկը լեզուն: Կառավարելու եւ կառավարուելու համար մարդիկ նախ պիտի միաւորուեն սկզբնապէս ցեղատոհմային, ապա պետական ամբողջութիւնների տեսքով, իսկ միաւորող գործօնը ամենից առաջ լեզուն է:

Այս դատողութիւնն այնքան հասկանալի է, ինքնին ամենբերելի ճշմարտութիւն, այնքան պարզ է անգամ պարզունակ ձեւակերպում, որ աստիճանաբար դադարում է գիտակցուելուց: Ընդհուկ այն աստիճանի, որ «պետական լեզուն», «լեզուի մասին օրէնք», «պետական լեզուաբաղաբականութիւն» արտայայտութիւնները ոմանք դժուարանում են ընկալել լինելով, այդուհանդերձ, ոչ թէ դրանց հակառակորդը, այլ կողմնակիցը: (Տարիներ առաջ, երբ հրապարակի վրայ էին Յայաստանի Յանրապետութեան սահմանադրութեան զանազան նախագծեր, դրանցից մէկը անվիճելիօրէն ազգային նպատակներին հետամուտ մի կուսակցութեան տարբերակը, ներկայացուած էր առանց պետական լեզուի մասին որեւէ յօդուածի, իսկ երբ դա հեղինակներին մատուցոյց արեց, ապա իրենք էլ էին զարմացել, թէ ինչպէս եւ ինչու են աչքաբոցի արել սահմանդրական մի դրոյթ, որին իրենք լիովին կողմնակից են): Մասամբ այդ հանգամանքով է բացատրոււմ արտաքուստ անհասկանալի իրավիճակը, երբ մեզանում հայերէնի հակառակորդներն աւելի խորն են գիտակցում լեզուի տեղն ու դերը ազգային պետութեան եւ կառավարման ազգային համակարգի կայացման ու կայունացման մէջ, ուստի աւելի են վնասում նպատակասլաց լեզուաբաղաբականութեան իրազնործումը, քան թէ, ընդհակառակը, կողմնակիցորեն են նպաստում գործին իրենց անտեղեակ անյոգութեամբ եւ կրաւորական կեցւածքով:

Պետական կառավարման համակարգը սովորաբար տրոհուում է ըստ ենթահամակարգերի, իշխանութեան տեսակների, իշխանական կառոյցների, մակարդակների, գործառոյթների, պատասխանատուութեան ոլորտների եւ այլն: Սրանք մասնաւոր գիտական վերլուծութեան արգասաւոր մօտեցումներ են, որոնք, սակայն, պէտք էլ խանգարեն կառավարման ամբողջ համակարգին վերաբերող ընդհանուր, հանգուցային վերլուծութիւնների կարեւորութիւնը գիտակցելու: Արդ, այդ բնոյթի վերլուծութիւն է կառավարման համակարգի դիտարկումը՝ պետական լեզուի կարգավիճակի հիրքքից՝ ոչ միայն իրաւական, այլեւ իրական:

### 2.

Յայաստանին ներկայումս բնորոշ ընկերային - տնտեսական, քարոյահոգեբանական եւ *քառարային* - կազմակերպական ճգնաժամային երեւոյթների հիմքում ընկած է կառավարման համակարգի ճգնաժամը: Իսկ վերջինիս գլխաւոր պատճառներից մէկն այն է, որ անտեսուում է հայերէնի պետական լեզուի համակարգային դերը: Միամիտ - կեղծամիտ գոհունակութիւնը Յայաստանի սահմանադրութեան համապատասխան դրոյթով (մի դրոյթ, որ եղել է Խորհրդային Յայաստանի

Նախորդ սահմանադրութիւններում եւս), հռչակագրային անվնասութեան չափ մկրատած «Լեզւի մասին օրէնքի» ընդունումը (նորանկախ պետութիւններից վերջինը), իշխանական հզօր լծակներից գուրկ պտական լիազօրում ծնւածնի Լեզուի տեսչութեան սոսկ հանդուրժումը (փոխանակ մախարարութեան կարգավիճակ յատկացնելուն) ոչ մի ընդհանուր եզր չունեն լեզուի համակարգային դերի եւ տեղի ըմբռման, համակարգաստեղծ, այդ թւում պետական կառավարման համակարգ՝ արարելու, առանձին ենթահամակարգերը միմեանց ցաուցուն կարողութեան ըմբռնման հետ, առաւել եւս այդ ըմբռնման գործօնական կիրառման հետ նպատակասլաց լեզուաբաղաբականութեան տեսքով:

Որեւէ մէկ գործօնով հնարաւոր չէ, անտարակոյս, սպառիչ բացատրել - մեկնաբանել այնպիսի բարդ երեւոյթ, ինչպիսին պետական կառավարման համակարգն է: Այս առումով չի կարելի, անուշտ, գերազնահատել լեզուի դերը: Սակայն բանն էլ այն է, որ կազմակերպման եւ կառավարման մանէն մակարդակում, իշխանական գրեթէ բոլոր կառօնակերպում, գրեթէ բոլոր պաշտօնեաների տնօնդակերպին ու գործելակերպին բնորոշ է միւս ծայրայեղութիւնը՝ լեզուի դերի թերազնահատումը, դիտարկումը որպէս ոչ իմնական, ամօճացեալ գործօն: Եւ այդ թերազնահատման աւանդոյթը այնքան կայուն է ու համատարած, որ պարտադրում է համապատասխան հակափաստարկներ գործադրել. այնպէս որ լեզուի դերի հնարաւոր գերազնահատումը ստորեւ շարադրանքում հարկաւոր է ընկալել ոչ թէ որպէս տեսական սխալ կամ աշխարհայեացքային մոլորութիւն, այլ ընդամենը թերազնահատողների թերահաւատութիւնը հակակշռելու ոճական հնարք, ճիշդ նոյն պարտադրանքով, որ ժողովրդական միաստութիւնն է յորդորում «Խտտորնակին խտտորնակ»:

## 3.

Աստուածաշնչեան «բաբելոնեան խառնակութիւնը» ցայտուն օրինակն է այն բանի, թէ զուտ լեզուական գործօնի միջոցով ինչ հզօր, կործանարար հարուած է հնարաւոր հասցնել կառավարման համակարգերին: Երկնահաս աշտարակ կառուցելու բաբելոնցիների ձեռնարկումը Աստրժու կողմից ընկալուեց իբրեւ մտրդկային ամբարտաւանութիւն, իսկ յանդուզն շինարարների պատժելու միջոցների ընտրութեամբ նա ասհմանափակուած չէր: Մինչդեռ գործադրում է անըսպասելի պատիժ՝ լեզուների խառնակումը. մարդիկ, այլեւս միմեանց չհասկանալով, չեն կարողանում շարունակել շինարարութիւնը: Իսկ թէ ինչու էր ներագղեցութեան յատկապէս այդ միջոցը համարուել առաւել արդիւնաւետ, հասկանալի է դառնում այն փաստարկման բովանդակութիւնից, որով ամենագօր Աստուած իիմնաւորում է իր վճիռը. «Ահա ազգ մի եւ լեզու մի ամենեցուն, եւ գայր սկսան գործել, եւ արդ ոչինչ պակասի ի նոցանէ զամենեան, գոր ինչ յօժարեցան. գործել»: Այսինքն մէկ լեզուով խօսող ազգն իրօք այնքան զօրեղ է, որ իր ամէն մի մտայացումը կարող է իրականացնել անհանգստացնելով նոյննիսկ Աստծուն: Սա է. թերեւս, Աստուածաշնչի ամենաարժեքաւոր խորհուրդը, որը, ցաւօք, ինչչեւս հարկն է մեզանում չի գիտակցուել (թէպէտ իմաստազրկուելու աստիճան կրկնուում է «Ճանաչել գիմաստութիւն եւ զխրատ» յորդորը):

Սովստ խորեմացու վկայութեամբ, երբ Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Պարթեւը, հայոց գրերի գիւտից յետոյ, ձեռնամուխ եղան Աստուածաշնչի թարգմանութեանը, ապա առաջին անգամ հար-

կարուած էին թարգմանել ոչ թէ յունարէնից, այլ ասորերէնից. մինչ այդ Մեհրուժան Արծուհին այրել էր յունարէն գրքերը, իսկ պարսիկ վերակացուները հետազայում էլ հետեւողականօրէն խոչընդոտում էին յունարէնի տարածմանը, պարտադրում էին պարսկերէնը եւ ասորերէնը (քանի որ ասորական եկեղեցու կենտրոնը Պարսկաստանում էր): Յունարէն միւս գրքերը նոյնպէս թեթրգմանում էին միջնորդ լեզուի ասորերէնի միջոցով: Իսկ երբ Մաշտոցը մեկնում է Քիւզանդիա ստանալու իրաւունք նաեւ Յայաստանի արեւմտեան մասում հայերէն գիրը տարածելու, ապա քիւզանդական ոչ միայն հոգեւոր, այլեւ աշխարհիկ իշխանութիւնները, իբրեւ իրենց համաձայնութեան պարտադիր պայման, պահանջում են վերստին թարգմանել Աստուածաշուկնը յունարէն բերօրեակից:

Եւ մի՞թէ պատահական է լեզուի պետական գործառութեան հանդէպ այդքան աչալուրջ ուշադրութիւնը օտարազգի իշխանաւորների կողմից, ընդօմին ոչ միայն անցեալում, այլեւ ներկայումս: Ցաւալիօրէն ծածօթ ու դաժմաօրէն կրկնուող մի պատմութիւն է նախկինում պարսկերէն ու յունարէնի լեզ մըրցակցում կառավարման համակարգում տիրապետող դառնալու համար, այժմ էլ անզլերէնն ու ռուսերէնը: Եւ երբ Ֆրանսան է խստացնում լեզուի մասին իր օրէնքի պահանջները անհանգստանալով անզլերնի ներխուժումից, կամ երբ Լաթվիան է իր պետականութեան հանդէպ աւելի յարգալից վերաբերմունք պահանջում ռուսախօս իր քաղաքացիներից, մեզ այդ ամենը կարծես բնաւ չի վերաբերում:

Թերեւս այդպէս են վարուել մեր նախապապերը՝ Կանի պետութեան հայ իշխանաւորները, երբ իրենց պաշտօնական գրագրութիւնը վարել են քաջաշերտ եւ նորխուհիւրէն բարդացնելով մեզ հայերիս համար «Ուրարտու»ին տէր կանգնելու խնդիրը: Իսկ չէ՞ որ մի հազար տարի յետոյ հայերի միւս սերունդներն էին կանգնելու ճիշդ նման բարդութեան առաջ, քանի որ հարկ էր լինելու այլազգիներին ապացուցել, թէ «Յայկական հոյրհըրդային Սոցիալիստական Յանրապետութիւն» կոչուած պետութիւնում հայեր են ապրել, որոնք, սակայն, հայերէնով չեն ձեւակերպել ոչ միայն իրենց կարեւորագոյն պետական որոշումները եւ գիտականատենախօսութիւնները, այլեւ փոխադրանու տոմսակները, թատրոնի տոմսերը, վկայականները, անդորրագրերը, գրեթէ ամէն ինչ:

Ինքնառուսացման (որը ոչ մի ընդհանրութիւն չունի ռուսաց լեզուի եւ ռուսական մշակութիւնի հանդէպ շիտակ սիրոյ հետ, այլ ազգային ինքնառուստացման պատմականօրէն որոշակի ձեւ է, ինչպէս նախկինում ինքնաթուրքացումը, ինքնապարսկացումը եւ այլն) կործանարար ընթացքը կատարեց 1988 - 1990 թուականների ազգային արթօնքի շնորհիւ. լուծ ձեւակնօրէն պետական լեզուի կարգավիճակ ունեցող հայերէնն սկսեց աստիճանաբար վերականգնել իր իրաւունքները եւ փաստից դառնալ պետական, պաշտօնական, կառավարման անմըրցակից լեզու. սկսուեց լեզուակորոյս շատ հայերի զանգուստային դարձը՝ ղեւի հայերէնախօսութիւն. կարծես ազգովի գիտակցեցինք ռուսախորհրդային պետադրանքը թօթալելու եւ սեփական կերպից վերադառնելու իրամայականը, լծուեցինք ազգային արժեքները ամրապնդելու եւ ամենից առաջ պետական լեզուն զօրացնելու, կառավարման սեփական համակարգը ստեղծելու համապարփակ խնդրի լուծմանը: Այնինչ տասը տարի անց վիճակը բնաւ էլ յուսադրող չէ, աւելի անկեղծ եթ սասնք, բարձիթողի լեզուաբաղաբականութեան հետեւանքով ողջ կառավարման համակարգի խաթարման ախտանշաններն այնքան ցայտուն են, որ դրանք միայն կոյրը կարող է չտեսնել:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՐԱԻՈՒՆԻՔ ԶՈՒՆԻ ՄՈՌԱՅՈՒԹԵԱՆ ՄԱՏՆԵԼ ՆԱԽՆԻՆԵՐԻ ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ՅԻՇԱՍԱԿԸ

Հայաստանի նախագահ Թուպրիթ Քոչարեանը Մարտի 31ին ստորագրեց հրամանագիր՝ «Հայաստանի միասնական արտաքին քաղաքակաւ ուսութեան վարման գործում Հայաստանի գործադիր իր իշխանութեան մարմինների գործունէութիւնը համակարգելու մասին» վերնագրով, որը տարբեր նախարարութիւններու գերատեսչութիւնների արտաքին քաղաքական, տնտեսական գործունէութիւնն ու կապերը ենթարկում էր Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան վերահսկողութեանն ու համակարգմանը: Հրամանագրի ստորագրման պահից գործադիր տարբեր իշխանութիւններն իրենց միջազգային պաշտօնական այցերը, խորհրդատուութիւնները, բանակցութիւնները, ստարակերպ պետութիւնների ու միջպագային կազմակերպութիւններին տուուող տեղեկութիւնները պէտք է համաձայնեցնեն Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան հետ: Յունիսի 2Ճին Կարսի Եթէ նախագահ Քոչարեանի հրամանագիրը չանտեսուէր: Յիշեցրնենք՝ Կարս-Գիւմրի քաղաքների համարործակցութեան կենտրոնի անդամներ, Շիրակի փոխմարզպետ Վոլոյտիս Առուշանեանը, Գիւմրու փոխքաղաքապետ Լեւոն խաչատրեանը, առեւտրային պայատի զեկավար Յովհաննէս Յովհաննիսեանը եւ թարգմանիչ Մուրատ Ասեսեանը Կարսի քաղաքապետ, «Մայր հայրենիք» կուսակցութեան անդամ Նայիֆ Ալիպէյօղլու հրաւէրով Յունիսի 27ին վրաստան տարածքով ժամանել էին Կարս՝ կովկասեան խաղաղութեան հարցին նուկուած համաժողովին մասնակցելու նպատակով: Սակայն ժամանման յաջորդ օրը Կարսի նահանգային անվտանգութեան վարչութեան փոխադրակարգի Քէօթաք Ավճրի պահանջել էր անյաղդ թողնել թուրքական տարածքը՝ պատճառաբանելով պաշտօնական այցի հրաւէրի բացակայութեամբ: «Աղգ»ի հարցումին անդեօք Հայաստանի պատուիրակութիւնը չի անտեսել

նախագահ Քոչարեանի Մարտի 31ի հրամանագիրը, Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան հասարակայնութեան հետ յարաբերութիւնների վարչութիւնը տուեց հետեւեալ պարզարտումը. «Չնայած այն հանգամանքին, որ Կարս-Գիւմրի երկխօսութեան կողմերը չէին ներկայացնում համապատասխանարար թուրքիայի եւ Հայաստանի ազգային կառավարութիւնները՝ գործադիր իշխանութեան մարմինները, այլ ներկայացնում էին տեղական ինքնակառավարման մարմինները, Հայաստանի արտաքին գործոց նախարարը մշտապէս տեղեակ է եղել եւ հետեւել է այդ գործընթացին»:

Կարս եւ Գիւմրի քաղաքների եղարյրացման պայմանագիրը ստորագրուել է 1993) թուականի Սեպտեմբերին, Հայաստանի արտաքին գործոց նախարարութիւնը ի սկզբանէ ողջունել է երկու քաղաքների տեղական իշխանութեան մարմիններին համապործակցութիւնը:

Հայ-թուրքական պաշտօնական միջկառավարական երկխօսութիւն գոյութիւն չունի, եւ Հայաստանի արտաքին գործոց նախարարութիւնը կարծում է, թէ Կարս-Գիւմրի երկխօսութիւնը կարող էր միջկառավարական երկխօսութեան իւրայատուէկ մտտել հանդիսանալ: Այնպիսի տպաւորութիւն է ստեղծուում, թէ հայ-թուրքական դիւանդիտական յարաբերութիւններ հաստատելու գործում շահագրգիռ է միայն հայկական կողմը: Եթէ երկխօսութիւն սկսելու համար թուրքիան շահագրգռուած լինէր, ապա Կարսի միջպղկպը չէր լինի: «Աղգ»ը նախապէս գրել էր, որ «Հայաստանի հետ յարաբերութիւնների կարգաւորումը թուրքիայի շահերից է բխում:

Ուրեմն դա առաջին հերթին թուրքիային է անհրաժեշտ եւ ոչ Հայաստանին»: Արտաքին գործոց նախարարութեան մի փորձագէտ, որ ցանկացաւ անյայտ մնալ, «Աղգ»ին տեղեկագրեց, թէ պատշտական Անգարան դեմ է, այսօր պատշտ չէ Հայաստանի հետ յարաբերութիւններ հաստատել: Ընդհանրապէս, ըստ փորձագէտի,

### 4. Արպես ինքնաբաւ մի երեւոյթ լեզուն միտուած է միասնականացման, քանի որ ձգտում է արտացոլել ամբողջ իրողութիւնը: Դրանով է պայմանաւորում լեզուի համակարգաստեղծ առաքելութիւնը: Եւ կառավարման որեւէ համակարգ անբողջական (ուստի եւ արդիւնաւետ) է լինում ամենից առաջ շնորհիւ իր լեզուական ամբողջականութեան:

Լեզուի դերը չի յանգում պաշտօնական գործավարութիւնն ապահովելուն, թէպէտ յատկապէս պաշտօնական լեզուն է կառավարման ամէն մի համակարգի կմախքը: Լեզուն ամբողջականացնում է համակարգը ոչ միայն իր հարդորակցական գործառոյթով, այսինքն պաշտօնատարների խօսքային հարդորակցման ապահովելով: Լեզուն կազմակերպում է թէ անհատի եւ թէ հանրոյթի բովանդակ կեանքը: Իրենց համատեղ կենցեքի եւ գործունեութեան ընթացքում մարդիկ ոչ թէ սոսկ արտաքին հանգամանքներն են արձանագրում ու ազդակներին արձագանգում (ինչպէս դա երբեմն պարզեցուած ներկայացնում են վարքաբանական մօտեցման տեսաբանները), այլ «բարձրանում» են դրանք, ընկալում իրենց լեզւամտածողութեամբ, որն էլ հենց ուղղորդու է նրանց նպատակադրումներն ու կերպաւորում վարքեպահնոց:

Այնպէս որ, եթէ մենք մտադիր ենք ստեղծելու կառավարման ուրոյն ազգային համակարգ («հայկական *մեծեմեծք*»), առանց որի չկայ եւ չի կարող լինել իսկապէս ինքնուրոյն պետութիւն, հնարաւորութիւն պիտի ընձեռենք հայոց լեզուին անբոցակիւ եւ լիաձաւայ գործաւելու ու անխոչընդոտ քարգանձուու իբրեւ պետական եւ պաշտօնական լեզու: Խօսքը բոլորովին էլ մշակութային ինքնանկուսացման կամ «հեծանիւ յայտնաբերելու» մասին չէ, այլ ուրիշը ընօրինակելի փորձը սեփական լեզուատնօրութեան ուսպնեակով բեկելու, ազգային - մշակութային հիմքով ընկալելու մասին: Միայն այդ դէպում մենք երաշխաւորուած կը լինենք, մի կողմից, թէ այն վտանգից, որ ներկայ օտարալեզու մշակութային ներխուժումը իր հետ, չի բերի օտար տնօժկակերպ, այլ կը ձուլուի, կը մերուկի հայալեզու եւ հայրենակենտրոն կառավարման համակարգին, իսկ միւս կողմից, այն վտանգից, որ հայերէնը կը զրկուի իր գաղափարածին եւ համակարգաստեղծ կարողութիւնից՝ վերստին արտաքսուելով համրային կանցիկ կազմակերպման ու կառավարման յետմիախորշը:

Յակառակ պարագայում խոցելի է կառավարման համակարգը եւ անկայուն պետականութիւնը: Մենք հայերս դրա դառը փորձն ունենք, բայց եւ խնդրի լուծման անզուգական օրինակը: Յունախօս քրիստոնէութիւնն էր, որ դառնալով Յայաստանում պետական կրօն, անխուսափելիօրէն խարխլեց նոյն հայոց պետականութիւնը, եւ միայն Մաշտոցի հանձարն էր, որ փրկեց հայ ժողովրդին առատակից յոյների հետ ձուլուելու վտանգից (եւ քրիստոնէութիւնն էլ, միայն հայախօս ու հայագիր դառնալով, հնարաւորութիւն ստացաւ որակաւ դերակատարման):

Անհերքելի է այն ճշմարտութիւնը, որ պետականազուրկ հայոց ազգային ինքնութիւնը պահպանուել է լեզուով ու հաււաքով (հայերէնացւած): Եւ զուր են ընդդիմախօսները մեզ մատնացոյց անում այլ երկրներն ու ազգեր (սպանախօս մի քանի պետութիւն, երկու եւ աւելի պետական լեզու ունեցող եւ այլն): Ինչպէս հայերէնը սպաներէն է, ոչ էլ հայերէն են արժաթիցիների կամ սպանացիների կրկնօրինակը, այնպէս էլ անզրկուցելի, ինքնատիպ է ամէն մի պետութեան փորձ: Առաւել եւս, ուրեմն, մեզ հայերիս համար է այդպէս կենսական «լեզու - պետութիւն - կառավարում» հարցարարումը թէ տեսական խորհրդածութիւնների ու ռազմապայրակն ծրագրերի, եւ թէ մարտավարական քայլերի ու ամենօրեայ խնդիրների լուծման առումով:

### ՎԱԼԵՐԻ ՄԻՐԶՈՅԵԱՆ

«Հայաստանի Հանրապետութիւն»

*Մենք հակուած ենք կարծելու, որ երկրի արտաքին գործոց նախարարն արտայայտում է նախապահյ տեսակէտները: Հայ -թուրքական յարաբերութիւնները չեն հաստատուում ոչ թէ՛ այն պատճառով, որ թուրքիան է ղեւում նախապայմաններ: Մյուսաց՛ջ՛ ենք, թէ ժամանակին թուրքիայի նախագահ Օգայն ինչ էր ասոււմ, դեռ մի քանի շաբաթ առաջ ինչ էր ասոււմ նախագահ Տեմիրկէյը: «Երեք-հինգ դուրուշով Ագրպէյճանը չենք ծախի»:*

Նոյնը կը կրկնուի նոր նախագահ Սեզկը: Հայաստանի իշխանութիւններն անուղղակի ազկարկներ են անում, թէ Հայաստան-թուրքիա յարաբերութիւնների հաստատումով մենք տրնտեսութեան բնագաւառում կը գտնուենք չահեկան վիճակում: Այդպէս չէ՛. տնտեսական առոււմով Հայաստանը իր տուժի, չենք ունենայ թուրքական շուկայում լայն սպառման ապրանքներ (մեր ունեցած գունաւոր մետաղը վաղուց ենք սպառել), հակառակը՝ թուրքական անորակ, էժան եւ անորոշ քաղադրութեան ապրանքները կ'ողողեն Հայաստանի շուկան: Թող ոչ ոք չկասկածի դրանում: Ճիշդ է, հայ-թուրքական դիւանագիտական յարաբերութիւնն հաստատուած չեն, բայց հաստատուած են տնտեսական յարաբերութիւններ: Հայ-թուրքական տնտեսական յարաբերութիւններն սկսուում են Սատախոյցի: Այնչորդաւորուած թուրքական ապրանքները ներխուժում են Հայաստան: Կարո՞ղ ենք մատնանշել հայրենական արտադրութեան մի ապրանքատեսակ, որը կրկին միջնորդաւորուած հասնում է սպառուում է թուրքիայում: Մի քանի լոււմայի ակնկալիքով Հայաստանն իրաւունք չունի մտացոլութեան մատնել նախնիների ողբերգական յիշատակներ: Եթէ նոյնիսկ հարցրա՞ր յարակախից տեղափոխե՞ք քաղաքական չարթութիւն, ապա Հայաս

# գրականություն եւ մշակույթ

ՄԵՐ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

## ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ Ս. ՂԱԶԱՐ ԿՂԶԻԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳԱՆՁԵՐՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՐԱՅՐ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԶՏԻԿԵԱՆԻ ՐԵՏ

**ՀԱՐՑՈՒՄ.** - Մեր ընթերցողները այնքան ալ ծանօթ չեն Մխիթարեան միաբանութեան պատմութեան. մշակութային գանձերու մասին խօսելէ առաջ, լաւ պիտի ըլլար, եթէ նախ հակիրճ կերպով անդրադառնայիք Մխիթարեան միաբանութեան ծննդոցին ու անոր 300ամեայ պատմութեան:

**ՊԱՏԱՍԽԱՆ.** - Մխիթարեան միաբանութիւնը հիմնուած է նախ եւ առաջ Հայաստանեայց Եկեղեցին անասան պահելու համար: Այս առումով, Մխիթար Սեբաստացիի կողմէն, պայքարած են նաեւ այլ հոգեւորականներ, ինչպէս Կոմիտաս քահանայ Քոմիտիւթեան եւ կամ վարդապետ Խաչատուր Էրզրումցի: Այդ շրջանին օսմանեան մայրաքաղաքին մէջ գործող կարգ մը եկեղեցիներ բարոյապէս անկման մէջ էին: Անոնցմէ ոմանք իշխանութիւն ձեռք բերելու համար եկեղեցւոյ սրբազան սպասները կը ծախէին ու կը նուիրէին թուրք փաշաներուն: Այս անկումը կանխելու եւ վերանորոգելու համար վանական կենտրոն Մխիթար կը ծրագրէ միաբանութիւն մը հիմնել ու վերադառնալ մեր հոգեւոր անկումներուն: Այնպէս ինչպէս ատենին Գլաժորը, Տաթևը, Սանահինը եւ կամ Հարիճի վանքը: Եւ որովհետեւ նման ծրագիր իրագործելը հնարաւոր չէր Օսմանեան կայսրութեան տարածքին, ան ապաստանեցաւ նախ Յունաստանի Մեթոն բերդաքաղաքը, որ այն ատեն կը գտնուէր Վենետիկեան Հանրապետութեան իշխանութեան տակ, ուր հիմնեց իր առաջին հայկական վանքը Հայաստանէն դուրս: Այդ պայմաններու մէջ հայ ազգային գարթօնը իրագործելու միակ ճանապարհը մշակույթի վերակենդանացումն էր: Այս պատճառով Մխիթար Աբբահայր եղաւ եկեղեցւոյ առաջին հիմնադիրներէն, որ ազգային մշակույթը դարձուց առաջնութեան հիմնադրարար: Նոյն ճանապարհէն ընթանալով իր յաջորդները մինչեւ հիմա կը շարունակեն անոր սկսած գործը:

դարձնել կղզին. կը գնէ զայն պետութենէն վճարելով խորհրդանշական գումար մը մէկ ֆրանք:

**Հ.** - Ուրեմն այդ «մէկ ֆրանք»ը արժեւորելով ինք ու իր յաջորդները կրցած են ստեղծել հայ մշակութային «կայսրութիւն» մը. որ այսօր գոյութիւն ունի Հայաստանէն դուրս:

**Պ.** - Մխիթար Սեբաստացիին հիմնական մտահոգութիւնը, որ փոխանցած է նաեւ իր անմիջական յաջորդներուն, եղած է փրկել հայերէն ձեռագիր մատենաները: Մխիթար Սեբաստացի կը պատուիրէր Մխիթարեան հայրերուն, որ ամէն տեղ փնտռեն, եւ ուր որ հանդիպին հայկական ձեռագիրներու:



Վերանորոգուած գանձատան մէկ մասը

գիր - մատենաներու, անպայմանօրէն, ի գին ամեն զոհողութեան. ձեռք բերեն եւ կամ առնուած ընդօրինակեն գանձը ու տեղափոխեն մենաստան: Պատահած է, որ հոգեւորականներ ծախած են նոյնիսկ իրենց կապան. պարեգօտը եւ կամ կօշիկը ու հաւաքած են ձեռագիրներ, յատկապէս քիւրտերն ու թուրքերն:

**Հ.** - Կրնա՞ք հետաքրքրական օրինակ մը պատմել...

**Պ.** - Ի հարկէ, ժժ. դարու վերջաւորութեան հայր Ներսէս Սարգիսեան. որ պատմական Հայաստանի աշխարհագրական եւ ազգագրական վիճակագրութիւնը կը պատրաստէր, «Տեղագրութիւն ի փոքր եւ ի մեծ հայս» ընդհանուր խորագրին տակ, օր մը քրտական գիւղի մը մէջ հիւրը կ'ըլլայ քիւրտ բեկին, եւ երբ գիշերը կ'ուզէր ջուր խմել կարաս մը, կը նշմարէ անոր վրայ իրեն կափարիչ դրուած է հայկական ձեռագիր մը Ս. Եւսեփիոս Կեսարացիի «Քրոնիկոնը», որ այն կարեւորագոյն մատենաներէն մէկն էր, որոնք առհասարակ համաշխարհային մշակութային արժէք կը ներկայացնեն: Այս ձեռագրի յունարէն բնագիրը կոր-

ուած է: Հայերէն միակ օրինակը թարգմանուած է եւ դարուն եւ բնօրինակի արժէք կը ներկայացնէ: Այս հոգեւորականը, ինչ որ ունեցած է իր վրայ, հազուատէն սկսեալ մինչեւ իր վերջին օրապահիկը, կը վճարէ քիւրտ բեկին եւ ձեռագիրը ձեռքին կը հասնի Վենետիկի Ս. Ղազար կղզին: Ձեռագիր հաւաքելու նմանօրինակ աշխատանքին արդիւնքը կ'ըլլայ այն, որ Ս. Ղազարը, Երեւանի Մատենադարանէն ետք, ձեռագիրներու մեծագոյն կեդրոնը կը նկատուի:

**Հ.** - Այսօր քանի՞ մատենա կը հաշուէ Մխիթարեան ձեռագրատունը:

**Պ.** - Եզրօրէն ըլլալու համար պէտք է ըսեմ, որ ունինք չորս հազար ամբողջական - լրիւ ձեռագիրներ: Ասոնց վրայ կու գան անլեւնալու երկու հազար հատուածներ եւ պատառիկներ, առանց հաշուելու Մխիթարեան դիւանի ձեռագիրները, որոնք հազարաւորներ են:

**Հ.** - Բացի ձեռագիրներէն, ունի՞ք նաեւ այլ մշակութային հազարաւորներ, ասոնց մասին ես կ'ուզեմք. որ որոշ տեղեկութիւններ տաք մեզի:

**Պ.** - Մխիթարեան միաբանութեան Իտալիոյ մէջ ըլլալու իրողութիւնն ու միաբաններու եւրոպական կրթութիւնը ստանալու հնարաւորութիւնը մեծապէս օգտակար եղած են ոչ միայն հայ մշակույթի գանձերու հաւաքման ու պահպանման, այլեւ



Մխիթարեան միաբանութեան գանձերն՝ Թիֆլիսի մէկ գլուխ գործոցը

առհասարակ հայ ազգային ինքնագիտակցութեան ու զարթօնքին: Այս պատճառով Մխիթարեանները եթէ ուր որ առաջ արդէն իսկ սկսած են ընել այն, ինչ որ կը փորձենք ընել այսօր մենք սփիւռքահայրէս ամէն տեղ: Ուրեմն, մեր քանգարանին հիմնական հարստութիւնը կը կազմեն հայ մշա-



Այվազովսքիի նուիրուած անկիւնը

կութային գանձերը, բաժնուած հետեւեալ ձեւով: Ա. - Հնատիւ աղօթք. Սկսեալ առաջին հայ տպագրեալ գիրքէն Յակոբ Մեղապարտի «Ուրբաքաղիքէն», մինչեւ Վենետիկի «Ճաշոցներն» ու Ռսկան Երեւանցիի անսթրտամեան հրատարակութիւնները:

Բ. - Հիւանային ցիւթք. - ժՉ. դարէն սկսեալ հաւաքուած են հայ մեծատուններու եւ վաճառականներու արխիւները, որոնք պատմական մեծ արժէք կը ներկայացնեն: Ըստ Ալիշանի, ժՉ. եւ ժԺ. դարերուն հայերը իրենց կշիռը ունէին ամբողջ երկրագունդի տնտեսութեան վրայ:

Գ. - Հայ մամուլի գրեթէ կատարեալ հաւաքածոն ունինք. մինչեւ 1950ական թուականները: Իսկ անկէ ետք կը պակսին մեզի որոշ թերթերու որոշ թիւեր, որոնց գլխաւոր պատճառը այն է, որ տարբեր պատճառներով չեն դրկուած մեզի: Լաւ պիտի ըլլար, որ իւրաքանչիւր հրատարակատուն իր հրատարակած գիրքէն կամ թերթէն առնուած օրինակ մը դրկէր մեզի, որովհետեւ մենք կը պահենք գանձը մասունքներու պէս:

Դ. - Հայ միջնադարեան յուշարձաններու արձանագրութիւններ Մխիթար Աբբահայր պատուիրէր իսկ անկէ ետք կը պակսին մեզի որոշ թերթերու որոշ թիւեր, որոնց գլխաւոր պատճառը այն է, որ տարբեր պատճառներով չեն դրկուած մեզի: Լաւ պիտի ըլլար, որ իւրաքանչիւր հրատարակատուն իր հրատարակած գիրքէն կամ թերթէն առնուած օրինակ մը դրկէր մեզի, որովհետեւ մենք կը պահենք գանձը մասունքներու պէս:

Ե. - Ոսկեայ եւ արծաթեայ եկեղեցական սասանք: Գլխաւորաբար Պոլիսէն, Վանէն եւ Թիֆլիսէն հաւաքուած այս սպասները մեծ արժէք կը ներկայացնեն ոչ միայն հոգեւոր, այլ նաեւ իրեն արուեստի գործեր: Ընդհանրապէս անոնք իրագործուած են ժԺ. դարուն, սակայն կայ նաեւ անլի հիւներ: Անոնց մեծամասնութիւնը ունին նաեւ հայերէն արձանագրութիւններ, որոնք երբեմն կը պարունակեն կարեւոր պատմական տեղեկութիւններ:

Զ. - Իզմիկի եւ Քթօթիայէն հայկական լախճապակեայ մեծագոյն հաւաքածոն. կազմուած երկու մեծ հայ հնավաճառներու նուիրատուութեամբ: Տիար Պօղոս Իսպանեան (Եգիպտոսէն) եւ Յարութիւն Քիւրտեան (Ա.Մ. Ն.Էն):

Զրոյցը վարեց ՍՈՎԱԷՍ ՏԵՐԿԵԼԵԱՆ  
Շարժ. էջ 8

- 350 L.L. 1 քիւս լուիկ
- 500 L.L. 1 քիւս վարունգ
- 750 L.L. 1 քիւս կարմիր կաղամբ
- 500 L.L. 1 քիւս ձակնդեղ
- 900 L.L. 1 քիւս կարմիր պղպեղ
- 750 L.L. 1 քիւս Հալեպի պղպեղ
- 1750 L.L. 1 քիւս մուլուխիտ
- 1750 L.L. 1 քիւս կուտատուկ
- 300 L.L. 1 քիւս ձմերուկ
- 500 L.L. 1 քիւս սեխ
- 1000 L.L. 1 քիւս խնձոր
- 3000 L.L. 1 քիւս մանկա

**MASTER ALL**  
supermarket

ԳՆՈՒՄԻ  
ԼԱՒԱԳՈՅՆ ՐԱՍՅԵՆ

**ԲԱՆՋԱՐԵՂԵՆԻ  
ՇՈՒԿԱՆ ՄԵՐ ՄՕՏ**

# ԻՆՏԵՐՆԵԹԻ ԾԱՆՅԵՐՈՒ ԿՐԱՅ

## ԿԱՐԵԼԻ՛ Է ԿԱՄՐՁԵԼ ԿԻՂԵՐԸ

### ՃԱՐՏԱՐԱՐՈՒԹՅՈՒ ՄԵԾԵՐԸ ԿԸ ԶՆՆԱՐԿԵՆ ԵՆԵԿՏՐՈՆԻԷ ԸՆԴՈՐՈՒԿԱԳՈՒԹՅԱՆ ՏԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԱՂԵԱՏ ԵՒ ԸՆԴՈՒՄՏ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՄԻՋԵՒ

Իրօք, *ինթերնետի* ընդարձակ ցանցերը համատարած բնոյթ չունին: Աշխարհի տարածքին 20 հոգիին միայն մեկը *ինթերնետ* կը գործածէ: Անոնք 60 առ հարիւր կ'ապրին Միացեալ Նահանգներու տարածքին, թէև աշխարհի բնակչութեան միայն 5 առ հարիւր կ'ապրին Գերմանիայի մայրաքաղաքին մէջ: Ափրիկէի տարածքին միայն 14 միլիոն հեռաձայնի գիծեր գոյութիւն ունին. շատ անելի քիչ, քան Թեքսասի կամ Մենիսկայի մէջ:

Շարքաւորեցին, երբ ճարտարարուեստի մեծերը հանդիպեցան Օքսֆորտի խորհրդածոյողին, անոնք օրակարգի վրայ դրին բարգաւաճող երկիրներու մէջ տեղեկատուութեան եւ հաղորդակցութեան մարտերու իրավիճակը: Նման երկիրներ գուրկել մեծ հաղորդակցութեան արհեստագիտութեան տնտեսապէս օգտուելու կարելիութիւններն, հետեւեալ կը դիմագրուեն լուսանցքային գոյութեան մը հետեւեալ:

*Ինթերնետի* հաստատութիւնը կը տարբերի նաեւ երկրի մը տարբեր խաւերուն միջեւ: Գնկատուեալ, որ համակարգչային սարքեր արտադրող զլխաւոր երկրի մը վերածուած է, սակայն անոր 1 միլիոն գիւղերուն 25 առ հարիւր հեռաձայնի գիծեր գուրկել է:

Ամերիկեան ուսումնասիրական կեդրոնի մը համաձայն, Միացեալ Նահանգներու տարածքին եւս *ինթերնետի* գործածութեան մէջ վիճակագրութիւն ունին ազգային գանձազան հաւաքակազմութիւններու, ինչպէս նաեւ տարբեր տարիքի եւ եկամտի տըր քաղաքացիներու միջեւ: Մինչ նման վիճակ կ'արձայնէ աշխատանք կը տարուի, *ինթերնետի* ցանցերուն բովանդակութիւնը տակաւին նպատակաւորուած կը մնայ ուսեալ եւ անվերելի տիրապետող խաւին:


Արդեօք արքայա տրեւիստի արեւելի՝ պիտի աղքատանան: Տեղեկատուական մարզին ընդարձակումը կրնայ խորացնել արքայա տրեւիստ երկիրներու միջեւ կենսակարգային տարբերութիւնը: Միլիոնաւոր մարդիկ ոչ միայն հեռաձայնի եւ համակարգչի հաստատութիւն չունին, այլ նաեւ գուրկել են ծորակի ջուրը: Եւ տեղեկատուութեան: Մտավախութիւնը այն է, որ արքայա տրեւիստ պիտի չկարենան իրենց նախնական համակար-

գրով եւ ենթակառոցներով քայլ պահել առեւտուրի եւ արտադրողական նոր հորիզոններ բացող *ինթերնետի* երեւոյթին հետ:

Սակայն կայ նաեւ միւս երեսը. «տեղեկատուական յեղափոխութիւնը» աշխարհի տնտեսութիւնները իրարու քով բերելու աստիճան հզօր է: Օրինակի համար, ժամանակի ընթացքին Ինտոնետի մէջ գործարաններ կրնան *եւելտորոնց* հաղորդակցութեան միջոցով մրցիլ ամերիկեան գործարաններու հետ:

Այսուհանդերձ արքայա տրեւիստ *եւելտորոնց* հաղորդակցութիւնը տարածող ուսումնական կեդրոններ, ենթակառոցներ եւ հաստատութիւններ չունենալով կրնան կորսնցնել անոնց բարիքներն օգտուելու առիթը:

ՄԱԿԻ մէջ յանձնարարութիւն կողմէ կատարուած ուսումնասիրութեան մը համաձայն, 2 միլիոն տղարով կարելի է *եւելտորոնց* հաղորդակցութեան վիճակը կամրջել արքայա տրեւիստ երկիրներու միջեւ: Անշուշտ ասիկա բաւարար չէ *ինթերնետ* տարածելու համար: Աղքատ երկիրներ ամեն բանէ առաջ պէտք է բարեկեցիկ իրենց բնակիչներուն գրաճանաչութեան մակարդակը եւ քաջալերեն շահարկումները սեփական մարզին մէջ:



## ՄԵԾԱԳՈՅՆ ՓՈՐՁԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

### ՄԻՏՏԻ ՈՂԻՄՊԻԱԿԱՆԸ ՆԱԵՒ ԿԸ ԾԱՆՈՒԹՈՒ ԻՐԵՒԷ «ԻՆՏԵՐՆԵԹԻ ՈՂԻՄՊԻԱԿԱՆԸ»: ՄԱՍՆԱԳԵՆԵՐ ԿԸ ՊԱՏՐԱՍՏԵՆ ՍԱՐՁԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒ ԸՍՎԱՅԱԿԱՆ ՃՏԵՍԱՐԱՆ ՍԸ

Յառաջիկայ Մեծամասնութիւն, երբ Միտհի Ողիմպիական խաղերուն ընթացքին մարզիկներ մետալներ պիտի շահին եւ պիտի կորսնցնեն, շատերը քննարկելու ըլլան կամ գործի երթալու պիտի պատրաստուին: Միտհի ծամերը 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9 ժամ առաջ են, իսկ 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9 ժամ առաջ:

Ահա մասնակի հոս է ինթերնետի դերը: Այս տարուան Ողիմպիականը կը ծանուցուի իրեն Ինթերնետի Ողիմպիականը: Կը նախատեսուի, որ ամէն օր միլիոնաւոր մարդիկ ինթերնետի ցանցերուն միջոցով հետեւին մարզական արդիւնքներուն, քննարկումներու եւ անվերջ վիճակագրութիւններու: Անշուշտ, նոյնիսկ անոնք, որոնք պատկերասփիւռէն պիտի հետեւին խաղերուն, ինթերնետի միջոցով կարծիքներու փոխանակումը եւ մարզիկներու մասին տեղեկութիւններու հեղեղը անփոխարինելի պիտի մնան:

Այնպէս ինչպէս 1964-ին, Թեքսասի Ողիմպիականին առիթով, պատկերասփիւռ տիրական մտտը գործէ արդի կենցաղի մէջ, նոյնպէս այլ Միտհի Ողիմպիականը ինթերնետի մեծագոյն փորձ-քննութիւնը պիտի ըլլայ:

Այնպէս ինչպէս 1964-ին, Թեքսասի Ողիմպիականին առիթով, պատկերասփիւռ տիրական մտտը գործէ արդի կենցաղի մէջ, նոյնպէս այլ Միտհի Ողիմպիականը ինթերնետի մեծագոյն փորձ-քննութիւնը պիտի ըլլայ:

Համակարգիչի Այ. Պի. Լ. մ. ընկերութեան հաստատած [www.olympics.com](http://www.olympics.com) կեդրոնը՝ Ողիմպիական խաղերուն պաշտօնական ուէպ սայթը, արդէն ամէնէն հսկայական եւ բարդ կառոյցն է ինթերնետի ցանցերուն վրայ:

Թէեւ Միտհի Ողիմպիականը առաջինը չէ ինթերնետի աշխարհին մէջ (Նախաձեռնող 1998-ի խաղերը եւ Աթլանթայի 1996-ի խաղերը պաշ-

տօնական ուէպ սայթեր ունէին), սակայն անկապ կը ծանուցուի իրեն Ինթերնետի Ողիմպիականը՝ համակարգչային հաղորդակցութեան համաշխարհային օգտագործումին պատճառով:

